ԱԼՄԱ ԱԹԱՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Անկախ պետությունները՝ Ադրբեջանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (ՌՍԴԽՀ), Տաջիկստանի Հանրապետությունը, Թուրքմենստանը, Ուզբեկստանի Հանրապետությունը եւ Ուկրաինան,

ձգտելով կառուցել ժողովրդավարական, իրավական պետություններ, որոնց միջեւ հարաբերությունները կզարգանան պետական ինքնիշխանության ու ինքնիշխան հավասարության փոխադարձ ճանաչման եւ հարգման, ինքնորոշման անքակտելի իրավունքի, միմյանց ներքին գործերին չմիջամտելու եւ իրավահավասարության սկզբունքների ուժի գործադրումից եւ ուժով սպառնալիքից, տնտեսական եւ ճնշման ցանկացած այլ մեթոդից հրաժարվելու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների եւ ազատությունների հարգման, ներառյալ ազգային փոքրամասնությունների իրավունքները, միջազգային իրավունքի նորմերի ու հանրաճանաչ այլ սկզբունքների ու պարտավորությունների բարեխիղճ կատարման հիման վրա, ճանաչելով եւ հարգելով միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը,

համարելով, որ բարեկամության պատմական խորը արմատներ ունեցող հարաբերությունների, բարիդրացիական եւ փոխշահավետ համագործակցության ամրապնդումը համապատասխանում է ժողովուրդների արմատական շահերին եւ ծառայում խաղաղության եւ անվտանգության գործին,

գիտակցելով իր պատասխանատվությունը քաղաքացիական խաղաղության եւ միջազգային համաձայնության պահպանման համար,

հավատարիմ լինելով Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրի նպատակներին ու սկզբունքներին, հայտարարեցին ներքոհիշյալի մասին.

Համագործակցության մասնակիցների փոխգործունեությունն իրականացվելու է իրավահավասարության սկզբունքի, համակարգող ինստիտուտների միջոցով ձեւավորված պարիտետային հիմքի վրա եւ գործող համագործակցության մասնակիցների միջեւ համաձայնագրերով որոշվող կարգով, որը ոչ պետություն է, ոչ վերպետական կազմավորում:

Միջազգային ռազմավարական կայունության եւ անվտանգության ապահովման նպատակներով պահպանվելու է միջուկային զենքի նկատմամբ միասնական հսկողությունը եւ ռազմաստրատեգիական ուժերի միացյալ հրամանատարությունը: Կողմերը կհարգեն ոչ միջուկային եւ (կամ) չեզոք պետության կարգավիճակի հասնելու միմյանց ձգտումը:

Անկախ Պետությունների Համագործակցությունը բաց է նրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ նախկին ԽՍՀ Միության անդամների, ինչպես նաեւ Համագործակցության նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների, դրան միանալու համար:

Հաստատվում է կողմնակցությունը ընդհանուր տնտեսական տարածության, համաեվրոպական եւ եվրասիական շուկաների ձեւավորման ու զարգացման համագործակցությանը:

Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծմամբ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը դադարեցնում է իր գոյությունը:

Համագործակցության մասնակից պետությունները երաշխավորում են իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան նախկին ԽՍՀ Միության պայմանագրերից եւ համաձայնագրերից բխող միջազգային պարտավորությունների կատարումը:

Համագործակցության մասնակից պետությունները պարտավորվում են անվերապահորեն պահպանել սույն Հռչակագրի սկզբունքները:

* Հռչակագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 21-ից: